Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 180-Ա որոշման

«Մ. ՍԱՐՅԱՆԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐԸ

1.	Ծրագրի նպատակը	«Մ. Սարյանի տուն-թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունն արդիականացնելու, Մարտիրոս Սարյանի աշխատանքները ժամանակակից տարբերակով ցուցադրելու նպատակով նախատեսվում է իրականացնել լրացված իրականության (AR) և վիրտուալ իրականության (VR) փորձառությունների մշակման աշխատանքներ:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, Երևան քաղաք՝ մշակութային
6.	Ծրագրի բյուջեն	21,500,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	«Մ. Սարյանի տուն-թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, ՀՎՀՀ՝ 02512258, Հայաստան, Երևան, Սարյան փողոց 3, 0002
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2025 թվականի մարտի 24-ից մինչև 2025 թվականի նոյեմբերի 27-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Նախատեսվում է Մարտիրոս Սարյանի «Armenia Pano» նկարի 3D մոդելավորում, վիրտուալ իրականության փորձառություն, անիմացիայի ստեղծում, «Ձրհորի մոտ», «Ինքնադիմանկար. 3 հասակ», «Երևանյան բակը գարնանը», «Դեպի աղբյուր» և «Պարսկաստան» նկարների լրացված իրականության փորձառության ստեղծում: Իրականացվելու է 2025 թվականի մարտի 24-ից մինչև 2025 թվականի նոյեմբերի 27-ն ընկած ժամանակահատվածում՝ 21,500,000 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«Մ. Սարյանի տուն-թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունում լրացված իրականության (AR) և վիրտուալ իրականության (VR) փորձառությունների մշակման ծառայությունների մատուցում 21,500,000 դրամի չափով
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

31.03.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ